

Syriacum, Պերլին 1895) իր « Ուսումն փոխառեալ բառից », գործին մէջ (էջ 115, ինչպէս կը նշանակէ Աճառեան) որ կը համարի թէ հայերէն ԱՏԵԼ բայով շինուած բառախաղ մըն է, և կամ կրկնութեամբ ուժեղացած, նշանակելով ուժգին ատել, կամ բամբասել: Աճառեան համաձայն է այս մեկնութեան և եզրակացնելով կ'աւելցնէ. 1) Հայերէն լատրատել չի նշանակում հաջել, և ՆՅԲ միայն հնարած է այսպիսի իմաստ ըստ լատիներէնի: 2)

Չեւով նման չէ լատինականին: 3) Մծրնացին չէր կարող բնաւ ունենալ լատինական փոխառեալ մի բառ:

Աճառեանի վճռական եզրակացութիւնը այն ատեն միայն կրնայ ուղիղ համալուրիլ, եթէ բայը ըլլար ԱՏԱՏԵԼ կամ ԱՏԲԱՏԵԼ, առանց լ ձայնին: Հարցը կը լուծուի՝ երբ լաւագոյն օրինակ մը երեւան գոյ, ինչպէս ըսինք: 1824-ին Պոլիս հրատարակուած « Զգօնը » բաւարար չէ:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

(Շարունակելի)

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԶԻ ԽՃԱՆԿԱՐԸ

Ս. Ս Ո Փ Ի Ա Յ Ի Մ Է Ջ

Վերջերս Բագրավէպը հրատարակեց(1) հանդուցեալ Գեր. Հ. Յովհան վրդ. Աւգերի մէկ աշխատասիրութիւնը, ուր յարգելի Հայրը կրկին սեղանի վրայ կը դնէր Ս. Սոփրայի մէջ գանուող Ս. Գրիգոր Լուսաւորչի խճանկարին շինութեան թուականը:

Ասկէ առաջ, Հ. Վարդան վրդ. Հացունի՝ Բագրավէպին մէջ(2) կարճ ուսումնասիրութեամբ մը քննած էր այս խնդիրը և տարազի ձևերէն առաջնորդուելով՝ եկած էր այն եզրակացութեան թէ այդ խճանկարը Ժ. դարու գործ պէտք էր ըլլար:

Հ. Յովհան վրդ. Աւգեր իր գրութեամբը կ'աշխատի ջրել նախապէս յայտնուած կարծիքը, և պատմական փաստեր առաջ բերելով կը ջանայ հաստատել թէ այդ խճանկարը Զ. դարու գործ է:

Հ. Յովհան վրդ. Աւգերի փաստարկութիւնը թերեւս համոզիչ ըլլար, եթէ առանց կառուցման խարխիւր պատմական նկատելի սխալներ չուենար:

Արդարեւ՝ Հ. Յովհան վրդ. Աւգեր կը գրէ.

Ա) « Բարոյական զգացման տեսակէտով կարելի չէ ընդունիլ որ Վասիլ կայսեր ժամանակ, ևրբ արդէն հայոց ևւ յոյներուն միջեւ անջատման խոր ակօս մը բացուած էր չորս դարերէ ի վեր փոխադարձ ատելութեամբ և հակառակութեան ողին շարունակ արծարծելով, Բիւզանդացիք լաւագոյն հոգեկան տրամադրութիւն մը ունենային հայոց հանդէպ քան Յուստիանոսի ժամանակ, ևրբ տակաւին զահակից կը բաղմէր Թէոտորայի պէս իմաստուն, արիասիրտ հայագգի կայսրուհին(3), կայսեր հոգւոյն մէջ ներշնչող ամէն վեճական ևւ դերացանց ձեւնարկներու ևւ գաղափարներու...»: Հոս՝ Հ. Յովհան վրդ. Աւգեր կ'ընէ իր առաջին սխալը: Յուստիանոսի կինը, Թէոտորա կայսրուհին, որ ձիարձակարանի արջերու պահապանին աղջիկն էր ևւ պարուհի ձիարձա-

(1) « Բագրավէպ » 1955, թիւ 4-5 ևւ 6-7:
 (2) « Բագրավէպ » 1941, թիւ 1, էջ 13: 1943, թիւ 1-6, էջ 35:
 (3) Ընդգծումը ինձմէ: